

Համարը N 1587-Ն  
Տիպը Որոշում  
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ  
30.10.02./46(221)  
Հոդ.1072

Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն  
Ստորագրող մարմինը ՀՀ Վարչապետ  
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 31.10.2002

Տեսակը Մայր  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 26.09.2002  
Ստորագրման ամսաթիվը 11.10.2002  
Վավերացման ամսաթիվը 16.10.2002  
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳԻՏԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,Վավերացնում եմ  
Հայաստանի Հանրապետության  
Նախագահ Ռ. Քոչարյան  
16 հոկտեմբերի 2002 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 սեպտեմբերի 2002 թվականի N 1587-Ն

#### ԱՆՏԱՌԱՅԻՆ ԳԻՏԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԵ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ և 13-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Անտառային գիտափորձարարական կենտրոնի պետական փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպել, Անտառային գիտափորձարարական կենտրոնի պետական ոչ առևտրային կազմակերպության:

2. Սահմանել, որ

ա) Անտառային գիտափորձարարական կենտրոնի պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնում է՝

անտառաշինական աշխատանքներ,

անտառ-էկոլոգիական գիտափորձարարական ուսումնասիրություններ և անտառի զենետիկական պաշարների պահպանության ու վերարտադրության գիտաներդրական փորձարկումներ,

անտառային պաշարների տեղեկատվական բանկի ստեղծում և օգտագործման արդյունավետ ձևերի մշակում,

կենսաբազմազանության պահպանման նպատակով արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում,

անտառագիտասփյուռ աշխատանքներ, անտառատնտեսության բնագավառի համար կադրերի վերապատրաստում և ուսումնասիրտադրական պրակտիկայի կազմակերպում.

բ) համաձայն Հայաստանի Հանրապետության վիճակագրության բնագավառում տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ Անտառային գիտափորձարարական կենտրոնի պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

ա) գիտական նպատակներով պտուղների, հատապտուղների և ընկուզենու աճեցում,

բ) անտառի նյութական գնահատում և անտառի գնահատում,

գ) տնկանյութի աճեցում,

դ) մասնագիտական գիտելիքների վճարովի դասընթացների կազմակերպում:

3. Գիտափորձարարական աշխատանքների իրականացման, կադրերի վերապատրաստման և ուսումնասիրտադրական պրակտիկայի կազմակերպման նպատակով ,Անտառային գիտափորձարարական կենտրոնն պետական ոչ առևտրային կազմակերպության անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Զիկատարի 150 հեկտար անտառատարածքը:

4. ,Անտառային գիտափորձարարական կենտրոնն պետական փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման պահին դրա տնօրինության՝ պետական սեփականություն հանդիսացող գույքը՝ համաձայն N 1 հավելվածի, բացառությամբ շենքերի, շինությունների, պատմամշակութային նշանակության, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքի, սեփականության իրավունքով հանձնել ,Անտառային գիտափորձարարական կենտրոնն պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

5. ,Անտառային գիտափորձարարական կենտրոնն պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրինության շենքերը, շինությունները, պատմամշակութային նշանակության, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկից ավելի արժողությամբ գույքը՝ համաձայն N 2 հավելվածի, ,Անտառային գիտափորձարարական կենտրոնն պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացնել անհատույց օգտագործման իրավունքով՝ դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Հայաստանի Հանրապետության պետական գույքի կառավարման նախարարության հետ կնքվելիք պայմանագրի հիման վրա:

6. ,Անտառային գիտափորձարարական կենտրոնն պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնի, ինչպես նաև ,Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի ,գե, ,դե, ,եե և ,էե ենթակետերով ու 14-րդ հոդվածով սահմանված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը:

7. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարին՝

ա) մեկամսյա ժամկետում հաստատել ,Անտառային գիտափորձարարական կենտրոնն պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը.

բ) ,Անտառային գիտափորձարարական կենտրոնն պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության հաստատումից հետո մեկամսյա ժամկետում ապահովել նշված կազմակերպության պետական գրանցումը և սույն որոշմամբ սեփականության իրավունքով նրան հանձնվող անշարժ գույքի ու անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող տարածքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ա. Մարգարյան**

2002 թ. հոկտեմբերի 11  
Երևան

Ց Ա Ն Կ

ՍԱՏԱՌԱՅԻՆ ԳԻՏԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԵ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ  
 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

NN ը/կ	Գույքի անվանումը	Քանակը (հատ)	Գումարը (հազ. դրամ, 2002 թ. հունվարի 1-ի դրությամբ)
1.	Ավտոմեքենա Գազ-24ե	1	800
2.	Կահույք	2	432
3.	Աթոռ՝ գրասենյակային	15	144
4.	Գրասեղան	6	72
5.	Սառնարան	2	15
6.	Ընդամենը		1463
Հանձնված 2008թ.			
1	Սուրճի սեղան	10	256170
2	Աթոռ բանակցային	168	2818872
3	Խոհանոցային աթոռ	80	1427760
4	Բազկաթոռ	4	104400
5	Խոհանոցային սեղան	20	590640
6	բազմոց	3	683433
7	Պահարան	43	931853
8	Երկար սեղան	1	258100
9	Մահճակալ	43	2879710
10	Զգեստապահարան	17	1323365
11	Գրապահարան	5	364435
12	Բանակցային սեղան	1	228132
13	Համակարգչային սեղան	4	165300
14	գրասեղան	5	256165
15	Սպասք լվացող մեքենա	1	268733
16	Վառարան	2	372166
17	Սառնարան HITACHI	2	477534
18	Սառնարան panasonicI	5	788800
19	Հեռուստացույց Philips	4	603200
20	Լվացքի մեքենա	1	248433
21	Համակարգիչ	4	1517668
22	Անխափան սնուցման աղբյուր	4	60000
23	Լազերային տպիչ	2	49164
24	Պրոյեկտոր	1	566467
Ընդամենը			<b>17240500</b>

Հայաստանի Հանրապետության  
 կառավարության աշխատակազմի  
 ղեկավար-նախարար

Մ. Թովուլյան

**Ց Ա Ն Կ**

**ՄԱՏԱՌԱՅԻՆ ԳԻՏԱՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԵ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ  
 ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Անվանումը	Քանակը (հատ)	Հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ, 2002 թ. հունվարի 1-ի դրությամբ)
Լաբորատոր մասնաշենք	1	188
<b>Համընկած 2008թ.</b>		
Նոր ջրագիծ /մ/	1	22792
Գլխավոր մասնաշենք	1	20665
ճաշարան	1	27306
Տնակ /քոթեջ/	2	11766
Տնակ /քոթեջ/	1	16807
Ջրամբար-լողավազան	1	661
Ջրամբար /փակ/	1	100
Ստորգետնյա պոմպակայան	1	1359
Բաց ջրավազան	1	150
Ջրավազանի վրա գտնվող դասասենյակ	1	204
Սպասարկող անձնակազմի տնակ	1	1782
Հսկիչ սենյակ և գլխավոր մուտքի տարածք	1	1893
Արտաքին գյուղական տիպի զուգարան	1	213
Կեղտաջրերի կուտակման հոր	1	4720
Հացի ինքնաշեն փուռ	1	50